

«ՌՄԵՆՔՆ ՀԵՅՈՅ ԿԵԹՈՒԿԻՆՈՍԻ ՄԻԶՆՈՐԴՈՒԹԵԱՆ ԸԹՈՒԹ.»

(ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒԹՏԻՔ)

Աղեքսանիդ Վերմիուեան (Խօօօ Օօօզրեան  
№ 142 յուլ. 8, 1905).

—, Խօօօ Օօօզր. «Ի տեղական լուրերի մասում կարդում ենք. «Մեզ հազորդում են էջմիածնից, որ ամենայն Հայոց կաթուղիկոսը միջնորդել է վերացնել տաճկահպատակ հայ վարդապետների եպիսկոպոս ձեռնադրուելու համար էջմիածին գալու արգելքը. Տաճկահպատակ վարդապետների վերաբերութեամբ այս արգելքը, որ դրել է Վ. Կ. Պլեվէ, գործադրում է մինչև այսօր»:

Այս միջնորդութեան առիթով կարծում ենք հետաքրքիր կը լինի մէջ բերել մի քանի պատմական հաւատատիք, թէ մեր երկրի նախկին կառավարիչներն ու կայսերութեան մէջ բարձր վարչութիւնները ինչպիսի վերաբերմունք էին ցոյց տալիս դէպի այն խնդիրը, որով էջմիածնի Աթոռը ձգտում էր պահպանել իւր գերագահութիւնը տաճկայ և պարսկահպատակ հայերի մէջ:

Դեռ մինչև Երևանի նահանգի Աթոռաստանին միանալը էջմիածնի Աթոռը որոշ աստիճան կորցրել էր այն գերագահ նշանակութիւնը, որ նա հին ժամանակներից հաստատուած սովորութեամբ ունէր բոլոր երկրների հայերի մէջ. Այս նահանգը Առուսիային միանալով էջմիածնի Աթոռը առաջին իսկ օրից չը գրաւեց այն գերակահ գրութիւնը, որ ունի այժմ, (չը նայելով Վ. Կ. Պլեվէի կարգադրութեանը, և վերջին երկու տարիներս հրատարակուած փոփոխութիւններին): Իսկ այժմեան նշանակութիւնը էջմիածնի Աթոռը ձեռք է բերել հետզհետէ և գլխաւորապէս շնորհիւ ուսւս կառավարութեան հոգացողութեան Երեսնական թուականի սկզբում ամենայն հայոց Յովհան-

նէս կաթուղիկոսը (Կարբեցին) ջանահնար էր լինում վերահաստատել Տաճկաստանի վերայ Էջմիածնի գերագահ նշանակութիւնը, որ նուիրագործուած էր հնագոյն սովորութիւններով։ Յովհաննէս կաթուղիկոսի ջանքի գլխաւոր կէտերն էին հետեւալները.

1. Յիշել իւր անունը Տաճկաստանի հայ Եկեղեցիներում.

2. Բաշխել այնտեղի հայերին ո. միւռոնը.

3. Այնտեղի Եկեղեցիներում Էջմիածնի վանքի համար գանձանակ հաստատել և

4. Կ. Պօլսում Էջմիածնի մշտական փոխանորդութիւն հաստատել նուիրաբերութիւնները գանձելու համար։

Այս ժամին միջնորդութեան թղթակցութիւնները կատարւում էին այն ժամանակի Վրաստանի կառավարչապետ Բարոն Ռոզենի, վիցէ-կանցլէր դրաֆ Նեսսելրու, ներքին գործերի նախարար Բլուտովի, Կ. Պօլսոյ մեր գետպան Բուգենվիլ և սենատոր Ռոդոֆինիկինի միջև \*։ Բոլոր թղթակցութիւններից մէջ բերենք մի քանի տեղեր, որոնք պարզ ցոյց են տալիս այն ժամանակի կառավարութեան վերաբերմունքի բնաւորութիւնը դէպի Էջմիածնի Աթոռի ձգտութիւնները։ Ահա թէ ինչպէս է սկսւում Ա. Յ. Յ. (իսկական պետական խորհրդական) Բուգենվիլ՝ առ Ռոդոֆինիկին 1838 թ. նոյեմբերի 25-ին № 358 գրութիւնը Շնուրով ի նկատի մինիստրութեան հրահանգները և բազմադիմի ցուցումները որ հաղորդուել են ինձ, ես անդադար աշխատել եմ իրականացնել կառավարութեան և Վրաստանի մեր վարչութեան ենթադրութիւնները Էջմիածնի Կաթուղիկոսի կողմից այստեղ մի անձն անարգել մնալու մասին։ ի վագուց անտի Էջմիածնում հաստատուած հայ Եկեղեցու գերագահ Աթոռի և տաճկահպատակ հայերի միջև նախկին յարաբերութիւնները վերահաստատելու համար։

\* Акты Кавказской Археографич. Камиесии. т. VIII, переноска № № 179, 180, 182, 183, 184, 186, 187, 190, 195, 196, 206, 207, 212, 218, 222.

Քիչ ներքեւ կարդում ենք. «Միայն նրա (փողերանոցի տեսուչ Ղազազ Յարութիւնի) զօրեղ աղդեցութիւնը կարող է հեռացնել դժուարութիւններն ու կնճիռները, որ հանդիպում են ինձ այստեղի հայ հոգեսրտկանութեան կողմից։ Այդ դժուարութիւնները, արդարեւ, բաւական կարեար և հիմնաւոր են. որովհետեւ Տաճկաստանի հետ մեր վերջին պատերազմի ժամանակ Բարձրագոյն Դուռը պահանջել է այստեղի հպատակ հայերից տալ պաշտօնական խոստում, որ նրանք Ռուսիայի գայիսոնի տակ մտած հոգեսր վարչութեան հետ յարաբերութեան մէջ պէտք է չը մտնեն»։

Այս գրութեան վերջում ասած է.

«Աւելուրդ չեմ համարում կցել, որ անցեալ մայիսի 24-ին, № 116, ձեր գրութեան հետ ինձ ուղարկած թանկագին աղամանդեայ խաչերը Հայոց պատրիարքներին հասցնելու համար, դեռ չեն յանձնուած նրանց. թէև նրանց համար որոշուած այս պարզեների մասին նրանք արդէն ինձնից տեղեկութիւն ստացել են»։ (Եր. 277. հայ. Արք. ԿՕ.)\*

Բարոն Ռոզենը նկատելով և, Կօլոյ ու Երուսաղեմի պատրիարքների գմկամակութիւնը Յովհաննէս կաթուղիկոսի պահանջած 4 կետերը լիովին ընդունելու, գրում է գրափ Նեսաելրոդէին, ի միջի այլոց հետևեալը.

«Այլ և խոնարհաբար խնդրում եմ Ձերդ սրայծ առափալլութեանը, որ մեր գեսապանի առանձին ուշադրութիւնը դարձնէք յուշագրի մէջ բացարուած հանգամանքի վերայ և. Պօլոյ պատրիարքի գործողութեանց մասին, որ ոչ միայն ձգտում է խզել Էջմիածնից որևէ է կախումն, այլ և Էջմիածնի բոլոր աղդեցութիւնը տաճկահպատակ հայերի վերայ ոչնչացնել, և հնարաւոր միջոց ձեռք առնել՝ խափանելու այդ գործողութիւնները։ Որպէս եղրակացութիւն՝ պարտք եմ համարում պարզել, որ Էջմիածնի նախկին յարաբերութիւնը տաճկահպատակ հայերի հետ վերականգնելը ոչ միայն Մայր Աթոռին մեծ օգուտ կը բերի, այլ, ինչպէս ձեզ յայտնի է, մեր կառավարութեանն էլ՝

շատ բաներով, յատկապէս, ինչպէս համազօւած եմ, հէնց նրանով, որ Պրօպագանդի ջանքը կաթոլիկ դարձնելու Տաճկաստանի հայերին, որոնք մեր կուսակիցները են և անկեղծօրէն ցանկանում են յարած մնալ Էջմիածնին, յաջողութիւն չի ունենայ, (Թուղթ 21 նոյեմբերի 1835 № 92. Եր. 296):

Այս առիթով ո. օ. (գաղտնի խօրհրդական) Բլուր գովը գրում է Բարոն Ռոզէնին, ի միջի այլոց, հետևեալը,

«Աչքի առաջ ունենալով մերեւ գրուածը, գտայ որ, Էջմիածնի պատրիարքական Սթուփ ձգտումն այս գործում չը նայելով մեր դեսպանի բոլոր ջանքերին, թէև լիռ վին բաւարարուած չէ, սակայն պետութեան գլխաւոր նողատակը այս խնդրի նկատմամբ, դատելով Կ. Պոլոյ պատրիարքի ասածից, որպէս գործի սկիզբն, բաւական գու հայուցիչ է» (Թուղթ 17 նոյեմբերի 1836. № 2392 Եր. 299):

Բարոն Ռոզէնը անհամաձայն մնալով առաջ բերուած հայեացքին, ահա թէ, ի միջի այլոց, ինչ է գրում ո. օ. Բլուրովին.

«Հասու լինելով բուն պատճառներին, որոնք հարկադրել են Յովհաննէս կաթոլուղիկոսին չընդունել կ. Պոլոյ պատրիարքի առաջարկութիւնները, որոնք վերաբերում են որպէս ու միւսոնի բաշխման կարգին, նոյնպէսև Տաճկաստանի Հայոց եկեղեցիներում Էջմիածնի կաթուղիւ կոսի անուան յիշատակութեանը, չեմ կարող չըհամարել հիմնաւոր և բոլորովին արդարացի: Եթէ վերջ ի վերջոյ յաջողին նարկադրել Յովհաննէս կաթուղիկոսին, որ նա համաձայնի էլ, այն ժամանակ եւս ուսւ կառավարութիւնը պէտք է բոյլ չը տայ այդ դրանով եղծում է հայ եկեղեցու նին կարգադրութիւնը եւ աղարտում է Էջմիածնի պատրիարքական Ս.քոփի գերազահութիւնը ոչ միայն Տաճկաստանի, այլ եւ բոյր նայ եկեղեցիների ու հոգեւորականութեան վերաբերութեամբ: Առաւել կ. օ. այն պատճառով, որ կ. Պոլոյ պատրիարքի մեր համար այդ տեսակ վնասակար առաջարկութիւնը ընդունելը տարրացնելով Յովհաննէսի ընտրուելու և օծման անկանոնութեան

միտքը, ոչ միայն մեզ անցօր կը դարձնի յարմար դէպ-քում վերանորոգելու այժմեան պահանջը, ոյլ անսպատճառ առիթ կը տայ Պարսից և ուրիշ կառավարութիւններին, հետևելով տաճիկներին, ուրիմունքել նոյնպիսի կարգ իրանց հայերի մէջ էլ, որոնք այժմ՝ ընդունում են իրանց վերայ, ըստ հոգեսոր մասին, Յովհաննէս Կաթուղիկոսի լիակատար իշխանութիւնը, մահաւանդ երբ տեսնեն, որ տաճկաց հայերի իռուսափումն նրա իշխանութիւնից ու ազդեցու-թիւնից՝ մեր համաձայնութեամբ է եղել։ (Թուղիթ 17 օգաստ. 1837 № 376. եր. 307)։

Կարծում ենք, որ առաջ բերուած քաղուածները բա-  
ւական են, որ համոզուենք, թէ այն, որին ձգտում էին  
այն ժամանակի վարչութիւնները, յամառ տոկունութեամբ  
և հոգածութեամբ, Վ. Կ, Պլեվէի ժամանակ հերքում էր։  
Այս քաղուածները համեմատելով վ. Կ. Պլեվէի կարգա-  
դրութեան հետ ապացուցանում է թէ այն ինչ որ այն  
ժամանակ նպատակայարմար և անհրաժեշտ էր համար-  
ւում, այժմ ցանկալի չէ այլեւս ի հարկէ, ազդերի  
ոպատմական կեանքի մէջ հանդամանքները կարող են փո-  
փոխուել. և դրա համեմատ էլ անշուշտ պէտք է փոխ-  
ուեն իրերի վերայ հայեացքները։ Բոլոր պատմական դէպ-  
քերը այդ ժամանակից մինչև այժմ յայտնի են և նրանց  
մէջ խորհրդաւոր ու ծածուկ բան չը կայ։ Հարցնելու է,  
ինչ պատմական դէպքեր կամ պատճառներ կարող էին  
հարկադրել հրաժարուել այն բանից, որին ձգտում էին  
երեսնական թուականներին մտադիւր տոկունութեամբ։  
Ինչնք պէտք է բացադրել վերջապէս թէ հայ եկեղեցա-  
կան բարձրադիր անձինք, որ այն ժամանակ ամեն ուժով  
կամենում էին ազատուել էջմիածնի Աթոռի ազդեցու-  
թիւնից և փոքրացնել նրա առաջնութեան նշանակու-  
թիւնը, այժմ, նոյնպիսի տոկունութեամբ ձգտում են դէպի  
Ռուսիայի սահմանը՝ ձեռնադրութեան համար։ Որ, ոչ  
միայն Ռուսաստանի, այլ և Տաճկաստանի հայերը միշտ  
ձգտում են ունեցել դէպի Ռուսիա, որի մասին վկայում  
է բարոն Ռոզենն էլ այդ հասկանալի է, որովհետեւ պատ-

մական դէպքերը ակներեւ պարզութեամբ ցոյց էին տալիս  
այս ձգտման օդուան ու շահը, որ, չնորհիւ այս դէպք  
քերի ժուրքաց Հայաստանի յամառ հոգեորականութիւնն  
էլ միացաւ իւր հօտին, այս էլ հասկանալի է, որովհետեւ  
ուուս—հայ յարաբերութիւնների պատմական դարբնոցը  
միշտ կռանում էր այն կէտը, որով հայք հոգեորապէս  
զօդուում էին Ռուսիայի հետ։ Ակնկալութիւնը, որ Հայք  
ունէին ոուս կառավարութիւնից, անտանելի էր դարձա-  
նում ստրկութեան ժանդատած շղթան, որով շղթայուած  
էին հարեան երկրների հայերը իրանց տիրող կառավա-  
րութեան հետ։ Դուցէ բոլոր չնորհների փոխարէն, որոնցով  
ցամաքել էին հայերի արտասունքն ու արիւնը, թեթեացել  
տանջանքներն ու հարիւր հաղարաւոր կրծքից դուրս  
թռած հառաջանքները, նրանք ոև ապերախտութեամբ  
հատուցին, և որանով էլ բացատրւում է վերաբերմունքի  
դէպի նրանց փոխուելը։ Յայց կարելի է որ բոլոր ժոռ  
զովուրդը ապերախտ լինի։ Ընդհակառակն, պատմու-  
թիւնը տալիս է շատ անձնազոհութեան օրինակներ, թէ  
հայերը ինչպէս կապուած են եղել Ռուսիայի հետ, ինկատ  
առէք գոնէ այն, օրինակ, թէ ինչ նստեց թուրքաց  
հայերին նրանց համակրութիւնն ու գործակցութիւնը  
մեր զօրքին վերջին ոուս թուրքական պատերազմի ժա-  
մանակ\*։ Յիշեցէք սրանից յետոյ թուրքերի կուտակուած  
զայրոյթը, մտաբերեցէք 1896 թուի աւերն ու կոտորածը,  
երբ հարիւր հաղարաւորներ զոհ դնացին նրանց կատա-  
զութեանը։ Զէ որ կասկած չը կայ, թէ կատազութեան  
այս բաժակի բոլոր կաթիները տոգորուած էին հայերի  
համակրութեամբն ու գործակցութեամբը դէպի մեր զօրք-  
երը այն բոլոր պատերազմներում, որ Ռուսիան վարել է  
Տաճկաստանի դէմ։ Զենք խօսում այն անկեղծ և սրտա-  
շարժ փաստի մասին, որ օրինակ, Եփրատի և Տիգրիսի  
հովիտների հայերի տներում գտնւում են մեր թագա-  
ւորների պատկերները, կամ այն փաստի մասին, որ ոուս-

\* Брокгауз—Ефронъ. Т. XVIII, стр. 15.

թռւրբական պատերազմի ժամանակ մի քանի տասնեակ միլիոն բռւրլիների խնայողութիւն եղաւ ։ Հորհիւ տեղական ժողովրդի գոտահութեան դէպի գրաֆ լորիո—Մելիքովը, որ պատերազմը թշնամու երկում վարում էր թղթագրամով \*։

Այս փաստերը ապացուցանում են մինչև անդամ Տաճկահայերի վերաբերմունքի բնաւորութիւնը դէպի Ռուսիան։ Վախենում ենք թէ այս անձնուիրութեան փաստերին հակադիր՝ կասկածելի որակութեան փաստեր առաջ կը բերեն, որպիսին է «մինչև Ռուսակավագ մեծ Հայաստանի» շարաբաստ քարտէղը, որին, շատ օրէնսդրական փոփոխութիւնների ներմուծութեան ժամանակ, լուրջ նշանակութիւն է տրուել և որը հայերին շատ վշտերի պատճառ է դարձել՝ այս զէնքը տալով նրանց ատողների ձեռքը, և որ «կարմիր» ծառայութիւն է մատուցել Հայոց ճակատագրի մէջ։

Ազգերի պատմութիւնը սովորեցնումէ քաղաքագիտութեան այն պարզ իմաստութիւնը՝ թէ, երբ ժողովուրդների փոխադարձ յարաբերութիւնը կառուցուած է երկուստեք շահի, օգուտի և բաղդաւորութեան վերայ, այն ժամանակ այս յարաբերութիւնները լինում են ամենաամուն և անլուծանելին, ինչպիսի սրոգայթներ ել որ լարեն, այդ յարաբերութիւնները քանդելու համար, նրանք, այդ յարաբերութիւնները, կարող են ժամանակաւորապէս տատանուել, բայց վերջի փերջոյ պէտք է աւելի ամրապնդուեն, որովհետեւ այդ յարաբերութիւնները կառուցուած են հաստատուն հիմքերի վերայ։ Ընդհակառակն, ինչպիսի նուագներ էլ երգուեն միութեան, եղբայրութեան և սիրոյ մասին, քանի որ ժողովուրդների յարաբերութիւնը չի կառուցուած յիշեալ հիմքերի վերայ, նրանք, այդ յարաբերութիւնները<sup>1)</sup>, շահերի առաջին ընդհարման ժամանակ կը փլւեն։ Կարծում ենք, որ ուսների ու հայերի փոխադարձ յարաբերութիւնը յատկապէս կառուցուած է

\*) Братская помощь Армянамъ. сборникъ Гр., Джаншіевъ,

այնպիսի ամուր հիմքի վերայ, որ երբէք չի կարող խորա-  
տակուած լինել:

Թարգմանելով այս Աղեքսանդր Վերմիշեանի այս ուշ-  
ագրաւ յօդուածը՝ պարտք ենք համարում մի քանի կէ-  
տերի վերայ կանգ առնել, դրանց աւելի ևս պարզելու  
հայ ընթերցողների համար.

**Յօւսիկ. Սպս.**

ՀՈԳԵԲԱՆՈՒԹԵԸ ՏԵՂԸ ԳԻՑՈՒԹԻՒՆԵՐԻ ԾԵՐՔՈՒՄ

Պրօֆ. Ի. Գ. Օռանիսիկ

### ԳԼՈՒԽ III.

Հոգեբանական երեսոյթների առանձնայատկութիւններն  
եւ նրանց տարբերութիւնը Ըիզիքական աշխարհից:

Հոգեբանական երեսոյթներն հասկանալու համար չա-  
փաղանց կարևոր է պարզել, թէ ինչով է տարբերում  
հոգեկան աշխարհը ֆիզիքականից, ինչումն են կայանում  
գիտակցութեան որոշ առանձնայատկութիւնները. Հոգեոյ  
մէջ կան արդեօք որ և է յատուկ սկզբունքներ կամ յատ-  
կութիւններ, որոնք չեն պատահում կամ չեն արտայայտ-  
ում նիւթական աշխարհում.

Առաջին բանը, որ աչքի է ընկնում հոգեկան աշ-  
խարհը նիւթականի հետ համեմատելիս, այն է, որ իւրա-  
քանչիւր հոգեբանական երեսոյթը բացառիկ անձնական  
բնաւորութիւն ունի, այսինքն անխզելի կապուած է այն  
անձի հետ, որն այդ երեսոյթը զգում է իւր մէջ.

Եթէ ևս դիտում եմ որ և է առարկայ, այդ դէպ-  
քում նրանից ստացուած մտապատկերը սեփականու-  
թիւնս է, կամ իմ դիտակցութեան որոշ կացութիւն.  
կարելի է ընդունել, որ որոշ վայրկեանին ես միակ անձնա-